ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՏԴ 070

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՐԱՅԻՆ ՑԱՆԿԵՐ

Բանալի բառեր և արտահայտություններ. համահավաք ցանկ, տեղեկույթ, «Մշակ» լրագիր, «Էջմիածին» ամսագիր, «Պատմաբանասիրական հանդես», մատենագիտություն:

Ключевые слова и выражения: сводный список, сведение, газета “Мшак”, ежемесячник «Эчмиадзин», "Историко-филологический журнал", библиография.

Key words and expressions: combined list, information, newspaper “Mshak”, review “Ejmiatzhin”, “Patmabanasirakan hands”, bibliography.

Պարբերական մամուլի մատենագիտությունների համահավաք ցանկերի շարքում կարևոր տեղ ունեն անվանական պարբերական մամուլի ցանկերը, որոնք յուրատեսակ բանալի և տեղեկույթի աղբյուր են հանդիսանում տվյալ ամսագրից կամ թերթից օգտվողների համար: Այս ցանկերը լույս են տեսել թե՛ մեկ գրքով, թե՛ հատորային ձևով, որոնք մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: Դրանցից հիշատակենք մի քանիսը:

«Մշակ» լրագրի մատենագիտություն - «Մշակ»-ը հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ է: Սկզբում այն հանդես է եկել որպես շաբաթաթերթ: Լույս է տեսել 1872-1875թթ. Թիֆլիսում: 1985թ. եղել է ընդհատում: Հիմնադիր-խմբագիրն էր հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ, հրատարակիչ Գրիգոր Արծրունին (1845-1892): Թերթի խմբագիրներն են եղել Ալեքսանդր Քալանթարը, Համբարձում Առաքելյանը, Լեոն, Տիգրան Հախումյանը: «Մշակ» լրագիրը հանդիսացել է ազատամիտ մտավորականության գաղափարական օրգան, առաջադրել է ժողովրդավարական վերափոխումների ծրագրեր, սոցիալ-տնտեսական զարգացման ուղին: Հանդես է եկել հայկական դպրոցները եկեղեցուց զատելու առաջարկներով: «Մշակ»-ին թղթակցել են ականավոր մտավորականներ և անվանի գործիչներ՝ Պերճ Պռոշյան,

Ռաֆֆի, Ղազարոս Աղայան, Գաբրիել Սունդուկյան, Ալեքսանդր Շիրվանզադե, Մկրտիչ Փորթուգալյան, Արփիար Արփիարյան և այլոք: Այն դադարել է լույս տեսնել Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1921թ-ին:[1]

1975 թ Հայկական ՍՍՌ Ալ. Մյասիկյանի անվան հանրապետական գրադարանի (այժմ՝ Հայաստանի ազգային գրադարան ինֆորմացիայի և մատենագիտության բաժին (այժմ՝ Մատենագիտության և գրադարանագիտության բաժին)) հրատարակեց «Մշակ» լրագրի բովանդության ցանկը (1872-1875թթ): Կազմողներն էին Մարիամ Բաբայանը, Արամ Բաբայնը և Փառանձեմ Խանզատյանը: Խմբագիրն էր Արամ Բաբայանը: Առաջաբանում Արամ Բաբայանը հանդես է եկել «Մշակ» լրագրին նվիրված պատմական ակնարկով, որի հաղթական ճանապարհի գրավականը միանշանակ պայմանավորված է Գրիգոր Արծրունի երևույթի հետ: **«Մեծ է եղել արծրունյան «Մշակի» դերը հայ ժողովրդի առաջադիմական լուսավորության գործում: Նրանք ովքեր զբաղվում են 19-րդ դարի երկրորդ կեսի հայ մամուլի, գրականության պատմությամբ, հասարակական մտքի հարցերով. չեն կարող չանդրադառնալ այդ շրջանի մամուլին, առանձնապես «Մշակ» թերթին» - նշել է Ա. Բաբայանը:[2]**

Մատենագիտությունը ժամանակագրական ձևով մեզ է ներկայացնում «Մշակ» լրագրի պատկերը: Սկսվում է տարեթվով, տարեթվերի մեջ ամբողջ ամսվա համարներն են և իրենց ենթաբաժինները:

1872

«Հունվար N 1, 2, 3, 4»

Պարբերականն ուներ հետևյալ բաժինները, որոնք և բարեխղճորեն ներկայացված են մատենագիտական ցանկում:

I «Առաջնորդներ և խմբագրականներ»,

II «Տերության կարգադրություններ»,

III «Դատաստանական ժամանակագրություն»,

IV «Ներքին տեսություն»,

---

[1] Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Եր., Հայկական հանրագիտարանի հրատարակչություն 2015, էջ 760:

[2] «Մշակ» լրագրի (Թիֆլիս) Բովանդակության ցանկ 1872-1875: Կազմ՝ Մ.Հ. և Ա.Ս. Բաբայաններ, Փ.Հ. Խանզադյան: Ընդհ. Խմբ. Արամ Բաբայանի: Եր., 1975, 352 էջ, պր I. էջ 11:

V «Արտաքին տեսություն»,
VI «Խառը լուրեր»,
VII «Բանասիրական»
VIII «Մատենագրություն»,
IX «Ֆելիետոն»,
X«Հայտարարություններ»:

Հարկ է նշել, որ նյութերը, նկարագրված են այդ ժամակահատվածում ընդունված մատենագիտական նկարագրության սկզբունքներով՝ «[Արծրունի Գ]»: Գյուղական քահանա: «Միջնակարգ հոգևոր կրթության մասին]: 24 փետր. № 8, էջ 1-2:[3]

Հատկանշական է, որ ամիսների մեջ նույնպես նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով, այսինքն՝ ամբողջ մատենագիտական ցանկը խիստ ժամանակագրական է: Այս հատորում ընդգրկված է 2666 մատենագիտական նկարագրություն (Ոչ մի հոդված դուրս չի մնացել այս ցանկից):

«Մշակ» լրագրի մատենագիտության մեջ առկա են հարուստ օժանդակ ցանկեր, որոնք են՝

1. Հոդվածների և թղթակցությունների այբբենական ցանկ,
2. Առարկայական ցանկ,
3. Անվանական ցանկ,
4. Աշխարհագրական անունների ցանկ:

Ինչ խոսք օժանդակ ապարատի այս բազմազանությունը ավելի դյուրացնող միտում ունի օգտվողների համար: Նմանօրինակ ցանկեր ունենալը մատենագիտության հաջողության գրավականներից է: Օժանդակ ցանկերում այբբենական կարգով ներկայացված են վերնագրերը, անձնանունները, աշխարհագրական անունները, որոնց կողքին մատենագիտական ցանկում առկա իրենց հերթական համարն է:

1988 թ. ժողովուրդների բարեկամության շքանշանակիր ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը (այժմ՝ Ազգային գրադարան) հրատարակում է «Մշակ լրագրի բովանդակության ցանկի 2-րդ պրակը: Այն ընդգրկում 1876-1878թթ. –ը: Կազմողն էր Փառանձեմ Խանզադյանը, խմբագիր պատմական գիտությունների թեկնածու՝ Լաուրա Գևորգյան: Այն չունի առաջաբան, քանզի 1-ին պրակում մանրամասն ներկայացված

[3] «Մշակ» լրագրի (Թիֆլիս) Բովանդակության ցանկ 1872-1875: Կազմ՝ Մ.Հ. և Ա.Ս. Բաբայաններ, Փ.Հ. Խանզադյան: Ընդհ. Խմբ. Արամ Բաբայանի: Եր., 1975, 352 էջ, պր I, -էջ 22:

էր «Մշակ» պարբերականը և մատենագիտական ցանկի հետ կապված տարրերը»:

Նկարագրությունը կատարված է նույն սկզբունքով, բաժինները գրեթե նույնն են: Այս պրակում նկարագրված է 3261 նյութ: Ցանկերի օժանդակ ապարատը նույն կերպ է ինչպես 1-ին պրակում:

2014 թ ՀՀ Մշակույթի նախարարության և Հայաստանի Ազգային գրադարանի կողմից թվային տարբերակով հրատարակվեց «Մշակ»-ի մատենագիտությունը, որը ընդգրկում էր 1880թ: Կազմողն էր բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանը: Այստեղ ներառված են գրեթե բոլոր նյութերը, ինչպես կազմողն է նշում, բացի հայտարարություններից: Այս ցանկը ևս նույն սկզբունքով է կազմված, ինչպես նախորդները: Սակայն պետք է նշենք, որ այս անգամ այն ենթարկվում է այդ ժամանակի մատենագիտական նկարագրության կանոններին:

«[1880թ երկու օրացույցների հրատարակությունը Երևանում] II թ.1- 15 յունվ. էջ 3»[4]

Մատենագիտական ցանկը բաղկացած է 4322 միավոր նկարագրությունից: Ունի նույն օժանդակ ցանկը ինչպես նախորդ երկու պրակներում. «Անվանացանկ, աշխարհագրական ցանկ, վերնագրային ցանկ, առարկայական ցանկ:[5]

Հաջորդ հատորային պարբերական մամուլի մասնագիտական ցանկը, որի մասին մի փոքր ցանկանում ենք մանրամասնել, «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունն է:[6]

«Էջմիածինը» կրոնական պատմա-բանասիրական հայագիտական ամսագիր է: Այն Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական հրատարակությունն է: Լույս է տեսնում 1944 թ-ից, Ամենայան հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքչյանի նախաձեռնությամբ: Մինչև 1961 թ-ը տպագրվել է Երևանում, հետո Էջմիածնում: Տարբեր տարիներին պարբերականը խմբագրել են Առաքել Առաքելյանը, Լևոն Կիսիբեկյանը, Աշոտ Աբրահամյանը, Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը, Երվանդ Մելքոնյանը, Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Բագրատ աբեղա Գալստյանը, Անդրանիկ Զեյթունյան, Վարդան Դևրիկյանը, Արշակ Մադոյանը: Ամսագիրը հիմնականում լուսաբանում է Մայր աթոռի

[4] nla.am/HAG/7/mshak 1880 pdf- էջ 3:

[5] nla.am/HAG/7/mshak 1880 pdf:

[6] Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Եր., Հայկական հանրագիտարանի հրատարակչություն 2015, էջ 397:

միաբանության, ներքին և Սփյուռքի թեմերի եկեղեցական կյանքը, ծանոթացնում Հայաստանյաց առաքելական եկեղեցու նշանակալի իրադարձություններին, անդրադառնում է միջեկեղեցական հարաբերություններին, միջազգային կրոնական և միջեկեղեցական, միջպետական կապերին, անդրադառնում Հայրենիք և Սփյուռքի շատ հարցերին և համագործակցությանը: Այստեղ են տպագրվում հայոց հայրապետների կոնդակները, շրջաբերականները, քարոզները, ճառերը: «Էջմիածին» ամսագրին աշխատակցել են բազմաթիվ ականավոր անհատներ՝ Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանցը, Գարեգին Հովսեփյանը, Գարեգին Լևոնյանը, Հակոբ Անայանը և այլոք:

«Էջմիածին» ամսագրի մատենագիտության 1-ին մասը լույս է տեսել 1975 թ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տպարանում: Կազմողն է Սեդա Կոծինյանը, խմբագիրներ Արթուն Հատիտյան, Սուրեն Քոլանջյան:[7] Սկզբում խմբագիրները հանդես են եկել «Էջմիածին» ամսագրի ստեղծման և անցած ճանապարհի մասին անդրադարձով:[8] Այն ընդգրկում է 1944-1973 թթ.»:

Սեդա Կոծիկյանը ավելի շատ ներկայացրել է մատենագիտության կազմման մեթոդը և սկզբունքները: Հատկանշական է, որ առաջին մասը նվիրված է պարբերականի ստեղծման 30-ամյա հոբելյանին:[9]

Մատենագիտական ցանկն ունի ժամանակագրական և այբբենական բնույթ:

Տրված է տարեթիվը, ներսում նկարագրված են այդ տարեթվի բոլոր հոդվածները: Օրինակ՝

1944

«2. Աբրահամյան Աշոտ:Մեր միջնադարյան գրիչները: [Ուսունասրություն]: 1944, փետրվար – մարտ, էջ 58-62, ապրիլ – մայիս էջ 42-45»:[10]

---

[7] Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի /Կազմ.՝ Ս. Կոծիկյան, խմբ. Արթուն Հատիտյան և Սուրեն Քոլանջյան: Էջմիածին.- 1975 -294 էջ:

[8] էջ III-XI:

[9] Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի /Կազմ.՝ Ս. Կոծիկյան, խմբ. Արթուն Հատիտյան և Սուրեն Քոլանջյան: Էջմիածին.- 1975XIII-XV:

[10] Նույն տեղում՝ էջ 1:

Նկարագրությունը կատարված է այդ ժամանակահատվածում ընդունված մատենագիտական կանոններին համապատասխան: Ցանկում առկա է 5283 նկարագրություն:

Ինչպես բոլոր մատենագիտական ցանկերը, այս ցանկը նույնպես զերծ չէ օժանդակ հարուստ ապարատից:[11] Այստեղ առկա են հետևյալ օժանդակ ցանկերը. Առարկայական ցանկ, Վանքերի և եկեղեցիների ցանկ, Հեղինակների և անձնանունների ցանկ, Տեղանունների ցանկ:

«Էջմիածին» ամսագրի հաջորդ մատենագիտական ցանկը հրատարակվել է 2012 թ Սուրբ Էջմիածնում: Կազմողն է Տեր Արարատ Քահանա Պողոսյանը, խմբագիր Գևորգ Տեր-Վարդանյանը: Այստեղ 1974-2008 թթ լույս տեսած նյութերի մատենագիտությունն է, նախաբանը՝ «Էջմիածին» ամսագրի պատմական դերի և նշանակության արտացոլումն է,[12] որը հեղինակել է խմբագիր Գևորգ Տեր-Վարդանյանը: Նա նշել է՝ «Վերջին գիտական առումով «Էջմիածին» ամսագիրն իր գոյատևման ամբողջ ընթացքում եղել է հայաստանեան հայագիտութեան, առավելապես միջնադարագիտութեան ջահակիրներից մեկը»:[13]

Այնուհետև՝ կազմող Արարատ Քահանա Պողոսյանի անդրադարձն է մատենագիտության կառուցվածքին և բովանդակությանը:[14]

Նկարագրությունը մի փոքր այլ է քան նախորդ գրքում՝

«Ամավերջի հանիսություն [Գևորգյան] հոգևոր ճեմարանում [14Զ, 1974]: 1974 Զ., էջ 26-30»:[15]

Մատենագիտության մեջ նկարագրված է 8239 նյութ: Օժանդակ ցանկերը բաղկացած են հետևյալ բաժիններից՝ Առարկայական ցանկ, «Անձնանունների ցանկ», «Տեղանունների ցանկ», «Վանքեր, եկեղեցիներ», անապատներ: Ինչպես տեսնում ենք գրթեր նույն կառուցվածք ունի, ինչ առաջին հատորում:

Հաջորդ հատորային պարբերական մամուլի մատենագիտական ցանկը, որ ցանկանում ենք հիշատակել՝ «Պատմա-բանասիրական» հանդեսի մատենագիտությունն է: «Պատմա-բանասիրական հանդեսը»-ը

---

[11] Նույն տեղում՝ էջ 243-293:

[12] «Էջմիածին» ամսագիր: Մատենագիտություն 1974-2008: Կազմող՝ Արարատ քահանա Պողոսյան, Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան: Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին: - 2012, 476 էջ:

[13] Նույն տեղում՝ էջ 6:

[14] «Էջմիածին» ամսագիր: Մատենագիտություն 1974-2008: Կազմող՝ Արարատ քահանա Պողոսյան, Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան: Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին: - 2012, էջ 12:

[15] Նույն տեղում՝ էջ 15:

հայագիտական քառամյա, 1999-ից եռամսյա հանդես է: Լույս է տեսնումմ ՀՀ գիտությունների Ազգային ակադեմիայի կողմից, 1958 թ Երևանում: Հիմնադիր-խմբագիրն է՝ Մկրտիչ Ներաիսյանը, խմբագիրներ՝ Վարդգես Միքայելյանը, Սարգիս Հարությունյանը, 2006 թ-ից Անուշավան Զաքարյանը: Այստեղ տպագրվում են գիտական ուսումնասիրություններ և հոդվածներ՝ հայոց պատմության, հնագիտության, աղբյուրագիտության, գրականության, լեզվի, փիլիսոփայության և մշակույթի մասին ամփոփումներհայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Այստեղ նկարագրվում են նյութեր նվիրված կավկասագիտությանը, Մերձավոր Արևելքին բյուզանդագիտությանը և այլն:[16]

1968թ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան (այժմ՝ ՀՀ ԳԱԱ) հրապարակում է «Պատմա-բանասիրական հանդեսի մատենագիտական ցանկը՝ պարբերականի 10-ամյակին: Մատենագիտությունը կազմել են Ա.Մ.Ոսկանյանը. Ա.Ա. Գրիգորյանը և Ս.Ս. Զատիկյանը:[17] Նյութերը դասավորված են հետևյալ կերպ՝ ըստ տարեթվերի, հերթական համարների և իրար հաջորդող հոդվածների նկարագրությունից: Դրանք միմյանիցի բաժանված են վերջակետով:

1959 № 1 (4)

«Ա. Աղոյան, Հոդվածներ. - Նոր դարաշրջանի վիթխարի ծրագիրը: Ա.Կ. Ջրաղացպանյան Սովետական Հայաստանի արդյունաբերական զարգացումը: Մ.Հ. Մուրադյան – Սովետական երաժշտության անցած ուղին…»:[18]

Ինչպես նկատում ենք, այս նկարագրության ձևը փոքր ինչ հեռու է մատենագիտական կանոններով նկարագրությունից:

Իսկ ահա II բաժին հանդիսացող՝ «Սիստեմատիկ ցանկում նյութերը դասավորված են ըստ գիտության ճյուղերի[19] և այստեղ նկարագրությունը այլ կերպ է՝ «Աբգարյան Գ.Վ. Կարծեցյալ Ստեփանոս

---

[16] Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Եր., Հայկական հանրագիտարանի հրատարակչություն 2015, էջ 880:

[17] «Մատենագիտական ցանկ», «Պատմաբանասիրական հանդես»: /Կազմ.՝ Հ. Անտոնյան և և ուրիշներ, Խմբ.՝ Մ. Ներսիսյան): ՀՍՍՀ ԳԱ. Եր.- 1983, - 222 էջ (Հավելված 1983 թ 2-3):

[18] Նույն տեղում՝ էջ 4:

[19] Մատենագիտական ցանկ: 1958-1967: Եր; ՀՍՍՀ ԳԱ. – 1968. – 126 էջ (Հավելված «Պատմաբանասիրական հանդես» թ 4) էջ 47- 118:

Տարոնացին նույն ինքը Ստեփանոս Տարոնացի Ասողիկն է: 1962, № 1, էջ 210-225: Ամփոփումը ռուսերեն»:[20] Ինչպես նկատում ենք նկարագրական տարրերը պահպանված են և արտացոլված են այդ ժամանակ ընդունված մատենագիտական նկարագրության օրենքներով: Սակայն որոշակի վերապահումներով, քանզի չունեն համարակալում:

Մատենագիտական ցանկի III՝ վերջին մասը.[21] մեզ ներկայացնում է «Հեղինակների անվանացանկը, որտեղ այբբենական կարգով հեղինակների ազգանուններն են, անվան և հայրանվան սկզբնատառերը և դիմացը հերթական տարեթիվը և համարը, որտեղ գտնվում է նշված հեղինակի հոդվածը՝

«Աթայան Ռ.Ա. – 1961 № 3-4»:[22]

1983 թ. նույն հաստատության կողմից լույս է տեսնում «Պատմա-բանասիրական հանդեսի մատենագիտության» կարելի է երկրորդ մասը, լրացված: Այն ընդգրկում էր 1958-1982 թթ հանդեսում լույս տեսած հոդվածների ցանկը: Ի տարբերություն նախորդող գրքի այստեղ նյութերը դասավորված են ըստ գիտության բնագավառների՝ «Պատմություն», «Հնագիտություն», «Ազգագրություն», «Գրականագիտություն», «Լեզվաբանություն», «Փիլիսոփայություն», «Իրավունքի պատմություն», «Արվեստ և ճարտարապետություն» և Ինֆորմացիա: Ըստ բաժինների նյութերը դասավորված են այբբենական կարգով և մատենագիտական տարրերի առկայությամբ:

«1355. Բախչինյան Հ.Գ. Սայաթ-Նովայի երեք ծածկագրի վերծանությունը, 1975, 4, 169-175»:

Այս հատորում «Անվանացանկ[23]» -ը անձնանունների դիմաց իրենց հերթական համարով է՝ հայերեն և ռուսերեն լեզուներով՝

«Ադոնց Մ.Հ. 473»[24]

Այսպիսով, նկարագրված բոլոր մատենագիտական ցանկերը՝ «Մշակ», «Էջմիածին» և «Պատմա-բանասաիրական հանդես» անգնահատելի դեր ունեն ոչ միայն պարբերական մամուլի պատմությամբ զբաղվողների, այլև հայագիտության և այլ բնագավառների համար: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն

[20] Նույն տեղում՝ էջ 47:
[21] Նույն տեղում՝ էջ 119-126:
[22] Նույն տեղում՝ էջ 119:
[23] Մատենագիտական ցանկ: 1958-1967: Եր; ՀՍՍՀ ԳԱ. – 1968. – 126 էջ (Հավելված «Պատմաբանասիրական հանդես» p 4) էջ 97-22:
[24] Նույն տեղում՝ էջ - էջ 97:

պարբերական մամուլի մատենագիտական այլ հրատարակություններ, որոնց անդրադառնալը նույնպես անհրաժեշտ է:

Ա. Հակոբյան

Հայ պարբերական մամուլի մատենագիտության հատորային ցանկեր

Ամփոփում

Հոդվածում անդրադարձ է կատարվել հատորային բնույթի «Մշակ», «Էջմիածին» և «Պատմա-բանասիրական հանդես» անվանական պարբերական մամուլի ցանկերին, նկարագրվել է դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, կարևորվել է այդ ցանկերի տեղեկատվական և գործնական դերն ու նշանակություն:

А. Акопян

Многотомные списки библиографии армянских периодических изданий

Резюме

В статье говорится о списках периодических номинальных многотомных изданий “Мшак”, “Эчмиадзин” и “Историко-филологический журнал”, описаны их структурные особенности, выделены информационная и практическая роль и значение этих списков.

A. Hakobyan

Volume lists of the Armenian periodicals bibliography

Summary

The article is devoted to the volume named periodical lists, such as “Mshak”, “Ejmiatzin” and “Patmabanasirakan hands”, their constructive peculiarities were presented , as well as the important informative and practic role and significance of those lists are mentioned.